վիճակաւոր Առաջնորդս զկանոնական բանս 6 գլխոց 'ի զգուշութիւն նոցին և 'ի բարեկարգութիւն եկեղեցւոյ, որք համառօտին այսպէս։

1°. Ժառանգաւորք եկեղեցւոյ առանց ստոյգ վկայական գրոց՝ մի ընկալցին 'ի կարգս եկեղեցականաց ուր և իցէ։

2°. Եպիսկոպոսունք ձեռնադրեսցեն միայն զնուիրեալս 'ի վիճակէ իւրեանց, և զեկեալսն յարտաքուստ մի ձեռնադրեսցեն առանց մահսերական գրոց։

3°. Առաւել քան զբաւականն եկեղեցեաց մի ձեռնադրեսցեն զոք 'ի Քահանայ՝ զի մի 'ի պատճառս չահուն թափառեսցին այսր անդր իբրեւ մուրացիկ 'ի նախատինս Սուրբ Կարգին։

4°. Մի ձեռնադրեսցեն զկուսակրօն Սարկաւագ կամ Աբեղայ՝ զորս ոչ կարեն չահել և պահել առ իւրեանս։

5°. Առանց ստոյգ քննութեան և վկայականի մի տայցեն պսակել զպանդուխտս։

6°. Ցամենայն տեղիս 'ի վիճակի իւրեանց փոյթ կալցին հաստատել դպրոցս 'ի կրթութիւն մանկանց եկեղեցւոյ, (1824· 'ի 10 Յուլիսի)։

Մարկոս վարդապետ Նուիրակ Աժտէրխանու՝ առաքեաց 'ի Կոստանդինուպոլիս արկղս 10, յորս էին 5 մեծ ջահ· 6 մեծ աշտանակ· 8 մեծ կանթեղ· 200 փոքր, և այլ աշտանակք եւ սպասք եկեղեցւոյ, ամենեքեան պղնձեայ և արծաթազօծ, և 230 բիւրեղ կանթեղ, զորս պատուիրէր փութով հասուցանել Յերուսաղէմ· սակայն ամենեքեան այրեցան 'ի մեծի հրդեհին 'ի Կոստանդինուպոլիս։ Հաշտութիւն Օսմանցւոց ընդ Ռուսաց։

Քաղաքապետն Երուսաղէմի Իսմայիլ Պէյ՝ հրամանաւ Կուսակալին Դամասկոսի առնոյր չորիցս 'ի տարւոջ յերից վանաց 1500 դահեկան իբր գին ծխախոտի· Հայք յեցեալ 'ի զօրութիւն հրովարտակին ոչ ետուն՝ կրեալ նախատինս և արհամարհանս· Քաղաքապետն առաքեաց զինեալ զօրականս, պատուիրեալ նոցա չելանել 'ի վանաց մինչեւ առցեն զդրամն· այլ զօրութեամբ հրովարտակին և 'ի ձեռն Նախիպին հպիւ կարացին զերծանիլ 'ի տրոց անտի եւ ետուն ջնջել զայն 'ի տումարէն, զի և մի այլ եւս պահան-